12815

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«08» 09 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0161-23

Ձեռնարկողը՝ ***«Գրանդ Մասփեր» ՍՊԸ***
Արարատի մարզ, Մասիս քաղաք,Հր. Վարդանյան 8փ.

Գործունեությունը՝ ***Մասիս համայնքի Մասիս քաղաքի Հր. Վարդանյան փ. 6 հասցեում պահեստային մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0161-23

<08> սեպտեմբերի 2023թ.

Արարատի մարզի Մասիս համայնքի Մասիս քաղաքի Հր. Վարդանյան փ. 6 հասցեում պահեստային մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Գրանդ Մաստեր» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության տեսակը՝	«Գ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Մասիս քաղաք, Հր.Վարդանյան փ. 6

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի (այսուհետ՝ Հայտ) «Գրանդ Մաստեր» ՍՊԸ-ն նախատեսում է կառուցել պահեստային մասնաշենք՝ գոֆրոստվարաթուղի, թղթի և ստվարաթղթի պահեստավորման համար :

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7) կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը, որպես քաղաքաշինական գործունեություն հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք է հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման N 06072022-03-0021 վկայականը / ծածկագիրը՝ 03-003-0296-0017 /, Արարատի մարզի Մասիս համայնքի կողմից տրամադրված 2023թ. մարտի 9-ի N CPP0-0000-5060 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/: Հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն, հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 8.06063 հա:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության /այսուհետ՝ պահեստային մասնաշենք/ հողամասը գտնվում Արարատի մարզի Մասիս համայնքի Մասիս քաղաքի Հր. Վարդանյան փ. 6 հասցեում և իրենից ներկայացնում է հետևյալ շինություններով ծանրաբեռնված հողամաս՝ ավտոտնակ՝ 24.4 քմ, պահակատուն՝ 38.4քմ, պարհսպ՝ 69.9քմ, պարիսպ՝ 202.9քմ, ներկայացված շինությունները չեն ապամոնտաժվելու: Տարածքի

հարևանությամբ գտնվում են «Գրանդ Մաստեր» ՍՊԸ-ի արտադրամասի տարածքը և այլ կառուցապատումից ազատ տարածքներ:

Պահեստային մասնաշենքի հողամասը հարթ է, երկրաբանական տեսակետից բարենպաստ է կառուցապատման համար, ծառաթփուտային բուսականությունը բացակայում է, տարածքը քարքարոտ է, տեղ-տեղ բետոնապատ: Համաձայն ինժեներա-երկրաբանական ուսումնասիրությունների հողի բերրի շերտ բացակայում է:

Հողամասի տարածքում բնության հատուկ պահպանվող և պատմամշակույթային հուշարձաններ, ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ չկան:

Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքը ներկայացվել են գրունտների հետևյալ շերտերով.

թիվ 1 շերտ – լիցք, խճաքարա-կավավազային կազմի,,

թիվ 2 ա. շերտ – կավ դարչնագույն,

թիվ 2 բ. շերտ – կավ գորշից մուգ մոխրագույն,

թիվ 3 շերտ – ավազակավ դարչնագույն:

Հիդրոերկրաբանական տեսակետից տվյալ տեղամասերում գրունտային ջրեր գտնվում են մոտ 3.8-5.0 մ խորությամբ: Դրանք բավական բարձր տեղադրում ունեն և մաս են կազմում Արարատյան արտեզիան ավազանի:

Արարատի մարզի կլիման չափավոր տաք է: Ձմեռը տևական է և համամատաբար տաք , ձյան ծածկույթի միջին հաստությունը հասնում է 10 սմ: Ամառը շոգ է, չոր: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 11.7°C: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -29°C, դիտվել է հունվարին, բացարձակ առավելագույնը՝ +43°C է՝ դիտվել է օգոստոսին: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 265մմ: Տեղումների առավելագույնը դիտվում է օգոստոսին՝ 72 մմ, իսկ նվազագույնը դեկտեմբերին՝ 20 մմ:

Պահեստային մասնաշենքի կառուցման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- Հողի ընդհանուր մակերես՝ 80606քմ,
- Կառուցապատման մակերես՝ 5416 քմ,
- Կանաչապատման մակերես՝ 807 քմ,
- Բարեկարգման մակերես /ճանապարհներ, ճեմուղիներ, հարթակներ/ ՝ 5850 քմ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է մեկ հարկանի 5.95 մետր բարձրությամբ շենք: Պահեստի պատերը և տանիքը սենդվիչ պանելներ են, իսկ ցոկոլային հատվածը ցեմետ ավազե սվաղ է: Տանիքը երկթեք է, ջրահեռացումը կազմակերպված:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինարարական աշխատանքները տևելու են 18 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ մինի ամբարձիչ, բուլդոզեր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չեն պահեստավորվելու:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման պահանջների: Կանաչապատ մակերեսը կազմում է 807քմ, ոռոգման նպատակներով ջրամատակարարումը՝ կաթիլային եղանակով, կիրականացվի է «Գրանդ Մաստեր» ՍՊԸ-ի արտադրական տարածքում

գոյություն ունեցող խորքային հորից, որի համար ընկերությունը օրենքով սահմանված կարգով ստացել է N 0235-22 ՋԹ-ն:

Կանաչապատ տարածքի 1 մ^2-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ^2:

Շինարարության փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման համար:

Պահեստային մասնաշենքի շինարարության և շահագործման փուլերում աշխատողների համար կոմունալ-կենցաղային նպատակով ջրամատակարարում և ջրահեռացում չի նախատեսվում՝ կօգտագործվի «Գրանդ Մաստեր» ՍՊԸ-ի արտադրամասի սանհանգույցները: Ջրամատակարարումը կիրականացվի միայն հակահրդեային նպատակով և կիրականացվի «Գրանդ Մաստեր» ՍՊԸ – ի հարևանությամբ գործող արտադրական տարածքից՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի հիման վրա: Ջրամատակարարումը իրականացվելու է 300 մմ տրամագծով խողովակով՝ 2 x 5.0 լ/վրկ ծախսով հրշեջ ծորակների և 96 լ/վրկ ծախսով սպրինկլերային ավտոմատ համակարգի միջոցով: Անխափան հակահրդեհային ջրամատակարարումն ապահովելու համար կտեղադրվի մոնոբլոկ հակահրդեհային ջրամատակարարման պոմպ (Q-=381մ3/ժ, H=75մP=132կՎտ): Հակահրդեհային ջրամատակարարման մայրուղային խողովակագծերը կմոնտաժվեն առաստաղի տակով: Պոմպակայանում տեղադրված կլինեն առանձին խումբ հրշեջ պոմպեր, որոնք կաշխատեն ձեռքով և ավտոմատ: Պոմպերի ավտոմատ միացման դեպքում միաժամանակ կմիանա լուսային և ձայնային ազդանշան:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել է շինարարական հրապարակին կից պլաստմասե պարզարան, որտեղ կուղորդվեն անձրևաջրերը: Պարզարանում տեղի կունենա մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն «ԷՆԵՐԷՔՍ» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրի:

Շինարարական աշխատանքերի ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածկագիրը՝ 912004000100 4/ 0.7տ/տարի, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, շինարարական աղբ /ծածկագիրը՝ 912006010100 4/ 30մ^3, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող /ծածկագիրը՝ 31401100 08 99 5/ 450 մ^3 ծավալով կտեղափոխվի Մասիսի համայնքի կողմից հատկացված վայր, չտեսակավորված սև մետաղներ պարունակող /ծածկագիրը՝ 35131100 01 00 4/ 1տ, չտեսակավորված ալյումինի /ծածկագիրը՝ 35310101 01 99 5/ և չտեսակավորված պղնձի / ծածկագիրը 35310301 01 01 3 / ջարդոններ 0.8տ, ջարդոնները հավաքվելու են շին. հրապարակում և պարբերաբար հանձնվեն մասնագիտացված ընկերությունների, եռակցման խարամ /ծածկագիրը՝ 31404800 01 99 4 / 0.1տ, թաղանթի տեսքով պոլիէթիլենի թափոններ /ծածկագիրը՝ 57102902 01 99 5/ 0.2տ և չաղտոտված ստեկլոտեքսթե փաթեթավորմա թափոններ ծածկագիրը՝ 18710202 01 00 5/ 0.2տ, որոնք հավաքվելու են առանձի կոնտեյներների մեջ և ապրանքային քանակություն կուտակվելու դեպքում հանձնվելու են մասնագիտացված ընկերությունների վերամշակման:

Պահեստային մասնաշենքի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմացմանն ուղղված հետևյալ միջոցառումները, որոնք ներառված են բնապահպանական միջոցառումների ծրագրում, այդ թվում՝

- մթնոլորտային օդ աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է հատկացնել 700000 դրամ:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Մասիս քաղաքի Հր. Վարդանյան փ. 6 հասցեում պահեստային մասնաշենքի կառուցման նախագծի հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Մասիսի մարզպետարանը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժինները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ըստ գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծության, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում, քանի որ շինարարական աշխատանքների ազդեցություններն իրենց բնույթով սահմանափակ են, կարճատև և կրում են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական պահանջներ

- Պահեստային մասնաշենքի կառուցման շինարարության մեկնարկը սկսել ՀՀ օրենքով սահմանված համապատասխան թույլտվությունների առկայության դեպքում:
- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

- Բետոնի տեղափոխումն իրականացնել բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնաջրերի արտահոսքը և բետոնի արտադրությունը:

- Փոշի առաջացնող սորուն նյութերի /ավազ, խիճ և այլն/ տեղափոխումը իրականացնել փակ ծածկով մեքենաներով, պահեստները ծածկվել համապատասխան բարձրության թաղանթով:

-Տարածքի կանաչապատումը իրականացնել համաձայն Մասիսի համայնքապետարանի կողմից հաստատված «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերը և պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արարատի մարզի Մասիս համայնքի Մասիս քաղաքի Հր. Վարդանյան փ. 6 հասցեում պահեստային մասնաշենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջին կարգի մասնագետ՝ Ռուզան Մակինյան